


ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻԳՆԱՏԻՈՍ ՄԱՆՐԱՆԿԱՐԻՉ ԵՒ ՇՈԹՈՌԿԱՆՑ ՏՈՆՄԸ

Սասնայի և Թայիկի որդին էր Ամեռ
ուազ Բ. որ նոյնպէս նուիրատուութիւն-
ներ ունի ԶժԱ. և ԶժԵ. թուականներին Աւետարանը գրուած է աձեռամբ Իգ-
նոյն Բագնայրի վանքում. առաջինը իւր նատիոսի ապաշնորհ եւ մեղապարտ գրչի



Դասկրի 1


անդրանկի անունով, որ դարձեալ Սասնա ի ՈՂԱ. թուականի ի մեծահռչակ ուխտո էր կոչւում և «կէս տարեկան ի Քրիստոս Հառվմոսի կոչեցեալ վանք ընդ հովան- փոխեցաւ»⁽¹⁾:

(1) Սարգսեան, Տեղագր. 188, 189, Ալիշան. Երիակ. 116.

ի ՈՂԱ. թուականի ի մեծահռչակ ուխտո Հառվմոսի կոչեցեալ վանք ընդ հովան- եաւ սրբոյ կարտպետին ի մէջ սուրբ Եղբարց։ Դռւկասի վերջում գրիչը մի փոքրիկ նկատողութիւն ևս ունի իւր մա-

սին, որի մանրամասնութիւններն անյայտ են. «Աւրհնեալ է Ած. յամենայն որբոց ամէն: որ զերծայ ի դառն կապանաց».

թիւն աշխատութեան մէջ⁽¹⁾, որ աւելարդ չենք համարում այստեղ ևս գնել, զիւրութիւն ընծայելով գաղափար կազմելու այն ընթերցողներին, որոնք ասիթ չեն ու-

Պահանջման
2

ուած, թէ կապանքի ենթարկուելու վրանզից. ինչո՞ւ համար էր կապանքի ենթարկուած, եւ ի՞նչպէս ազատուեցաւ, չգիտենք:

Իգնատիոսի գրչութեան նմանահանութիւնները ընազրից՝ մեծ երկաթազրով եւ յիշատակարանից՝ միջին երկաթազրով, տուել ենք մեր Քարեկ Հայ Հնագրու-

նեցել տեսնել մեր այդ աշխատութիւնը Բնազրի տառերը հաստ են, կարծես, նըկարուած, խոշոր. իւրաքանչիւրի միջին մեծութիւնը 0,8 սմ. ուղղահայեաց (պատկ. 1), բայց ոչ ուղղանկիւն, ինչպէս յիշա-

(1) Գրչութեան Արուեստը Հայոց մէջ՝ մասն Քարտէզ Հայ Հնագրութեան. Վաղարշապատ, 1913. §. 77 և 78:

տակարանի միջին երկաթագիրն է (պատկ. 2). իւրաքանչիւր երեսը 17 տողից բաղկացած ։ Աւետարանների սկսուածքները մի տող մանրանկարչական են (պատկ. 3, 4), մնացած երկու տողը ոսկեգիր. նաև հատուածների առաջին տողերը մանրանկարչական տառերով սկսուած ոսկեգիր են, ինչպէս եւ բնազրի մէջ այս.», «ած.»,

բուօսն զգալի ոչ միայն բնազրի համար, այլ և աւելի մանրանկարչական տնօրինական պատկերների և խորանների համար, որ սկզբում պիտի լինէր. մնացել են միայն Մարկոսի, Ղուկասի և Յովհաննու սկզբանագրդերը և բազմաթիւ լուսանցքի դարդեր, որոնցով և զաղափար ենք կազմում աւետարանիս զարդանկարչութեան մասին։



Պատկեր 3


«որդի այ.», «որ.» իրենց հոլովումներով։ Այսպիսով մեր առաջ ունինք մի շքեղ զործ, ընտիր իւր զըսութեամբ և յղկուած, մաքուր մագաղաթով, որ հորթի կաշուց է։

Բայց տարաբաղդաբար այդ փառաւոր զործը մեր ձեռքն է հասել թերի, ինչպէս և Վենետիկի ձեռագիրն էր. սկսում է ժ. տեսրից Մատթ. Ի. 35. ասոցէ ի վերայ ձեր ամենայն արիւնք...։ Կիսատ է և վերջից. Միեւ. «Դայ լս. և առնու...»։ Կո-

Մարկոսի սկզբնաղբարդը (պատկ. 3) քառանկիւն է, կեղրոնում մի մեծ հիւսկէն վարդեակ, մէջտեղում կապոյտ դաշտի վերայ ութ ճառագայթանի տատղ, իսկ սրա կեղրոնում կարմիր զնդակ. հիւսուածքը շրջապատուած է, իրար կպած, չզարգացած արմաւենիկի շարքով, երկու կարմիր զծերի մէջ առնուած։ Այս մեծ վարդեակի երկու կողմից մի մի զոյգ, դարձեալ հիւսուած, աւելի փոքր բոլորակներ, ոսկի

գաշտի վերայ՝ կապոյտ գծով, սպիտակով երկուսի բաժանուած։ Իրմէ չըջանակ բոլորի՝ քառանկիւնների շարք է, մէջը ձևաձևից կաղմուած խաչազարդով։ Ճակատին և անկիւններին բուսական զարդ։ Լուսանցքի դարդը՝ արմաւենիկի, եռատերեւի, քառակնդակների, մէջք մէջքի փա-

շուկասի սկզբնազարդի ճակատը նոյնակութիւններում և զագաթում հնգատերեւի զարդով։ տերենների բաժանման անկիւններում կարմիր զնդակներով։ Խորանի կեղրոնք՝ սովորական լիւնետի փոխարէն՝ մի եռանկիւնի է, սուր կողմով դէպի վեր



Քատկար 4

կագծի կողերից կաղմուած գտւազան է, գեղեցիկ խաչով և զլիսին լուսնեղիւրով։ Մանրանկարչական տառերը հիւսուածքի և բուսական մոտիւններից կաղմուած։ Ամբողջ զարդի մեծութիւնն է զրերի հետ միասին 30×22 սմ., քառանկիւնի խորանը միայն $17,50 \times 10,50$ սմ.,

ուղղուած, երկու կողերը լայն ժապաւէնածեւ զարդով, եզերուած կարմիր զըծով, իսկ երեսը մէջ ընդ մէջ ովաստիկանման զարդերով, թերերը կաղմուած սըրտածների մոտիւններով սուր ծայրերի իրար միացմամբ և ապա ամբողջը բալորակի մէջ առնուած։ Ժապաւէնածեւ կողերով

եռանկիւնով, խորանի քառանկիւնու մը-
նացած տարածութիւնը դարձեալ եռան-
կիւններ է ձեւացնում, մէկը ներքեսում՝
սուր ծայրով դէպի վեր ուղղուած, իսկ եր-
կուսը աջ և ձախ կողմից՝ սուր ծայրերը
դէպի վերին անկիւններն ուղղուած, որնց
մակերեսով թը արժաւենիկի և եռատերեւի
մոտիւներով ժամկուած եւ նրանց ցողուն-
ներով, որ տեղ տեղ օգակաւորուած են բա-
րակ և սպիտակ զոյգ զծերով, ինչպէս սա-
սանեան արուեստին և յատուկ է: Խո-
րանի գաշտը ոսկի է:

Լուսանցքի զարդը այստեղ ևս արմա-
ւենիկից և եռատերենից կամ հնգատերենից
կազմուած պատուանցանի և երկոր ձողի
վերայ հաստատուած խաչ է, տարրեր ձե-
ւակերպութեամբ, քոն Մարկոսինը և Յով-
հաննէսինը: Ք-ի ուղղահայեաց և հորիզոն-
նական ձողերը վերջաւորութիւններին մօտ
մանեկաւորուած են և հիւսկէններով զար-
դարուած, իսկ բնորոշ բոլորակի վերայ
կանթեր անցրած: Զողերի մակերեւոյթը
զարգարուած է փոքրիկ բոլորակների շար-
քով, մէջները սպաստիկաձեւ կամ երկրաչա-
փական զարդերով:

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՈ. ՅԱՎԱՀԻՒՆ
(Շար.)

Ա Մ Ա Ռ

Երկնակամարտին կապված ըրբեղ
Լոյսով կ'ողողէ արեւը պայծառ.
Տիեզերական մեծանուած կանքեղ
Անշոշանելի, խարոյկ անըսպառ:

Ազլեցուրեան սակ նառազայրներու,
Անքնակատար ոզգը կը բրուայ
Ալորապրոյս լայն նամբաներու,
Եւ արփիափայլ դաշերու վրօյ:

Պարաք արտերու նասկերը ոսկեայ
Պաղով ձաներան կը նակին զետին.
Ալօր հաշելով մանզաղին, կալին:

Առայգ մըշակը պասակներ նասկեայ
Կ'անցընէ խոնար զրյուխը եղին
Եւ ձեռք կը դրնէ մանին ու դէղին:

ՄԵԴՐԻԿ

ԱԿԵՆԱԿԱՐԱԿԱՆ ՄԱՆՐԱԿՐՈՒՑ

ԵՊԻԾԵԼԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հ. Ն. Ակինեան վերջերս մի հատոր
լոյս լն ծայեց. «Եղիշէ Վարդապետ և իւր
Պատմութիւնն Հայոց Պատերադմի» խո-
րագրով, որ իր ընդարձակ մատենագրա-
կան-պատմական ուսումնասիրութիւնն
առաջին մասն է: Իր ուսումնասիրութիւնը
դեռ շարունակում է «Հանդէս Ամսօրեայ»
ուսումնաթերթի մէջ: Հեղինակի նպատակն
է ցոյց տալ, որ Եղիշէլի Պատմութիւնը նա-
խապէս զրուած է Զ զարում իրը 572 թ.
ապօտամբութեան պատմութիւն: Մի զար
յետոյ մի մոլեւանգ յունատեսոց հայ խար-
դաբած է այդ Պատմութիւնը: Հիմնուելով
Դ. Փարպեցու Պատմութեան Բ զրուագի
վրայ՝ նա փոփոխում է Եղիշէլի Պատմու-
թեան զործող անձերի անունները, կրծա-
տած է այս կամ այն մասը, նոր յաւելում-
ներ է կցած և 572 թ. ապօտամբութեան
պատմութիւնը դարձրած է 451 թ. կրօնո-
կան պատերազմի պատմութիւն:

Այս նոր տեսակէտը հիմնառը կուլու հա-
մար՝ հեղինակը բերում է շատ ապացոյց-
ներ, զնում ու լուծում է բազմաթիւ զրա-
կան-պատմական խնդիրներ: Մեր նպա-
տակը չէ այդ տեսութիւնը քննութեան
առնել իր բովանդակ ծաւալով: Մենք կ'ու-
զէինք հեղինակի բերած ապացոյցներից մի
երկուսի արժէքը գնահատել. ցոյց տալ թէ
ո՞րքան պիտանի են այդ ապացոյցները հե-
ղինակի նոր տեսակէտիւնը փաստելու համար:

1. Դաւիթ Երեց եւ Վարդան Բ. Մամիկոնեան.

Ում հրամանով կամ հայցումով է
զրուած Եղիշէլի Պատմութիւնը: Ահաւա-
սիկ մի խնդիրը, որ փորձում է լուծել Հ.
Ն. Ակինեան: Եղիշէլի Պատմութեան ձե-
ռապիւների մի մասը խորագրի մէջ ունի.
«Դաւիթ Երեցը հայցեալ». միւս մասը
զրում է. «ի խնդրոյ Դաւիթի Մամիկոնի»:
Բանասիրութեան մէջ ընդունուած է ա-
ռաջին խմբի «Դաւիթ Երեցին» համարել
«Մամիկոնեան»: իսկ երկրորդ խմբի «Դա-
ւիթ Մամիկոնին» համարել «Երեց»: Հե-
ղինակն ետքը և Մամիկոնի և ձեւ համա-
րում է օ կրծատուած աղաւաղուած մէկ
ձեւ նախական «Մամիկոնեանի» (էջ 106,
121, 123): Դաւիթ Երեցի անունը յիշար-